«ԺՈՂՈՎՈՒՐԴ» ՕՐԱԹԵՐԹԻ 10.05.2012Թ.
«ՉՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ԹՎԵՐ» ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հոդվածի հեղինակը գրում է. «Երևանի թիվ 11 ընտրատարածքում ԱԺ ընտրությունների տվյալները բավական ուշագրավ պատկեր են արձանագրել: Ըստ ԿԸՀ կայքում տեղադրված արձանագրությունների՝ այստեղ մեծամասնական ընտրակարգով ԱԺ ընտրություններին մասնակցել է 40.720 մարդ, մինչդեռ համամասնական ընտրակարգով՝ 40.987:... Եվս մեկ հանգամանք. այս ընտրատարածքում, ըստ գտնվելու վայրի, ընտրողների լրացուցիչ ցուցակի թիվը կազմում է 239 հոգի: Ու եթե ընդունենք, որ լրացուցիչ ցուցակում ընդգրկված 239 ընտրողներն էլ մասնակցել են քվեարկությանը (նրանք իրավունք ունեն մասնակցելու միայն համամասնական կարգով), ապա միևնույնն է, թվերն իրար չեն համապատասխանում»:

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը տեղեկացնում է, որ համամասնական և մեծամասնական ընտրակարգերով ընտրությունների քվեարկության մասնակիցների թվերը կարող են նաև չհամընկնել, քանի որ մեծամասնական ընրակարգով ընտրություններին կարող են մասնակցել միայն ընտրողների հիմնական և քվեարկության օրն ընտրական տեղամասերում կազմված ընտրողների լրացուցիչ ցուցակներում ընդգրկված քաղաքացիները, իսկ համամասնկական ընտրակարգով ընտրություններին մասնակցելու իրավունք ունեն վերոնշյալ ընտրողների ցուցակներում, ինչես նաև ըստ գտնվելու վայրի ընտրողների լրացուցիչ, հաշվառում չունեցող ընտրողների լրացուցիչ, ոստիկանության ծառայողների լրացուցիչ, ստացիոնար բուժհաստատության ընտրողների և ձերբակալված անձանց պահելու վայրի ընտրողների լրացուցիչ ցուցակներում ընդգրկված քաղաքացիները:

Փորձելով գտնել թիվ 11 ընտրատարածքում մեծամասնական և համամասնկական ընտրակարգերով ԱԺ ընտրություններին մասնակցած ընտրողների «թվերի անհապապատասխանության» պատճառը՝ հոդվածի հեղինակը նշում է միայն ըստ գտնվելու վայրի ընտրողների լրացուցիչ ցուցակի 239 ընտրողների թիվը: Միևնույն ժամանակ, սակայն, հոդվածագիրը անտեսում է ԿԸՀ կայքում հրապարակված թիվ 11 ընտրատարածքում քվեարկության օրն ընտրական տեղամասերում կազմված ընտրողների լրացուցիչ ցուցակների 134 ընտրողների, հաշվառում չունեցող ընտրողների լրացուցիչ ցուցակների 50 ընտրողների և ոստիկանության ծառայողների լրացուցիչ ցուցակների 33 ընտրողների թվերը:

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով